

բարձրագոյն ներկայացուցիչներուն ուշադրութիւնը գրաւեց:3)

* * *

Հայերը, բնականաբար, ձեռնպահ չմտացին այս կենսական պայքարին մէջ: Ինչպէս որ տեսանք, թէ՛ իրենց կաթողիկոսին եւ թէ՛ իրենց համադորձակցութեան միջոցով անոնք պայքարեցան ծրագրուած կողոպուտին դէմ:

Հանուէյ արդար կը գտնայ Հայոց բուն ընդդիմութիւնը: «Ռուսիոյ ընկերութիւնը պատրաստուեցաւ ներկայացուցիչներ զրկել Գիլան եւ անոնց հետ մեծ քանակութեամբ կերպաս եւ ուրիշ բրդեղէն ապրանքներ: Այս ձեռնարկը աւելի շնչոց պայքարը: Հայերը արդէն հաստատուած էին Կասպեան վաճառականութեան մէջ, եւ, բնականաբար, ժողովուրդներ, որոնք երկար ժամանակի համար վայելած են բան մը, որուն միակ տէրը եղած են, արամարանօրէն ինքզինքնին համոզեն, թէ իրենք են միակ արգարացի տէրը այդ բանին: Հետեւաբար, իրենց համար արդար է, որ գործադրեն ամէն վարդապետութիւն եւ ամէն միջոց՝ դիմադրելու համար անոնց, որոնք բաժնեկից ըլլալ կը ջանան: Վաճառականները, որոնք այս ձեռնարկութեան միջամուխ եղան, վաղուց արդէն գնահատած էին Հայերէն ակնկալութիւնը, որով՝ իրենց շահը պիտի ըլլար Գիլանի մէջ միակ տուն մը հաստատել՝ արդիւնքը համար նախանձ եւ անհամաձայնութիւն, որոնք շատ յաճախ կ'երեւան արտասահմանեան մեր ներկայացուցիչներուն մէջ, որ աւելի հեշտութեամբ կարելի է ընդունիլ Պարսկաստանի պէս հեռաւոր եւ օրինականց երկրի մը մէջ»:4)

Արդարեւ, 1742-ին երկու անգլիացի ներկայացուցիչներ Գիլան կուգան: Կարճ ժամանակ վերջ, էլթընի եւ միւսներուն միջեւ ան-

3) Անդ՝ էջ 55-45: Կը տրուին շատ մը պատճէնները յուշագիրներու եւ վկայաթուղթերու, որոնք կարելոր են վաճառականական յարաբերութեանց պատմութեան համար, առանց սակայն, ուղղակի առնչութիւն մը ունենալու մեր նիւթին հետ:

4) Անդ՝ էջ 46:

համաձայնութիւն ծայր կուտայ, յետոյ պառակտում, վէճ եւ բաժանում: Մր. էլթըն, ամէն բան եւ նախկին ընկերները լքելով, Պարսից ծառայութեան մէջ կը մտնայ, կարելի բոլոր արգելքները յարուցանելով իր նախկին գործակիցներուն եւ Ընկերութեան դէմ:

Ռուսերը, կասկածելով անգլիացոց այս պառակտումէն, մանաւանդ էլթընի Պարսից միանալէն, իրենք ալ անգլիացոց հետ գործակցելու եղանակին կը փոխեն: Այսպիսով անգլիացիները Կասպեան եւ Պարսկական առետուրին մէջ կը մատնուին յուսահատական դրութեան մը:

1743-ին Հանուէյ գէպի այս կողմերը կ'ուղեւորուի: Հոկտեմբերի մէկին Յարիցի կը հասնի միացած՝ քառասուն բեռ եւրոպական ապրանք բեռցած հայերու կարաւանի մը):

5) Անդ՝ էջ 64: Persia and the Persians—S. G. W. Benjamin.—London, 1887, աշխատութեան մէջ կը գրէ. «1738-ին քանի մը անգլիացի վաճառականներ Նատիր Շահի թոյլտուութիւնը ստացան Գիլանի մէջ գործատեղիներ բանալու, Ռուսիոյ հետ 1734-ին առեւտրական դաշնագիր մը կնքելէ վերջ, ըստ որուն Եւրոպա երթալիք Պարսկական բոլոր մետաքսը եւ Պարսկաստան գալիք անգլիական բոլոր կերպասը պիտի անցնին Ռուսիոյ ճամբով: Ճօհանաս Հանուէյ, որ ասկէ քիչ վերջ Գիլանի մետաքսի առեւտուրին վարելն եղաւ, կը տեղեկագրէ, թէ 1744-ին Գիլան արտադրեց 240,000 փաունտ հում մետաքս: Հանուէյի տեսչութեան սկիզբները Գիլանի հում մետաքսի գինը Գիլանի մէջ փաունտը 2 տոլար էր, բայց յաջորդ տարին գինը բարձրացաւ 5 տոլարի:

«Կմեկին 1740-ին տեղեկացուց թէ լաւագոյն մետաքսը կը գործածուէր տեղական արտադրութեանց համար, եւ միայն ստորին տեսակները կ'արտահանուէին: Ամէն աշուն Ռէշտ կը խճողուէր Թուրքիոյ, Պարսկաստանի եւ Ռուսիոյ վաճառականներով, որոնք կը գնէին մետաքս: Թուրքիոյ վաճառականները կանխիկ կը վճարէին եւ իրենց մետաքսը միւս վաճառ-